

## 1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

### 1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը

#### 1.1.1. 2002թ. հունվար-ապրիլի ՀՆԱ ցուցանիշը

Հանրապետության համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ծավալը, ընթացիկ գներով, 2002թ. հունվար-ապրիլին կազմել է 228307.7 մլն.դրամ:

2002թ. հունվար-ապրիլին 2001թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ՀՆԱ-ի իրական աճի տեմպը կազմել է 109.3%՝ 2001թ. նույն ժամանակաշրջանի 108.5%-ի դիմաց:

Հարկ է նշել, որ 2002թ. հունվար-ապրիլին տնտեսության մեջ արձանագրվել են կառուցվածքային դրական տեղաշարժեր՝ ավելացել են արդյունաբերության և շինարարության ճյուղերի տեսակարար կշիռները: 2002թ. հունվար-ապրիլին ՀՆԱ-ի արտադրության կառուցվածքում արդյունաբերության ճյուղն ապահովել է ՀՆԱ-ի հավելածի 3.7 տոկոսային կետը, շինարարության ճյուղը՝ 0.8 տոկոսային կետը (2001թ. հունվար-ապրիլին համապատասխանաբար՝ 2.4 և 0.3 տոկոսային կետ):

2002թ. հունվար-ապրիլին տնտեսության բազային ճյուղերն ապահովել են ՀՆԱ-ի, հիմնական գներով, հավելածի ավելի քան 90%-ը: Միաժամանակ, անուղղակի հարկերի մուտքերը 2002թ. հունվար-ապրիլին 2001թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել են, և արդյունքում, ապրանքների ու ներմուծման զուտ հարկերի (հանած սուբսիդիաների) իրական աճի տեմպը կազմել է 116.7% (2002թ. հունվար-մարտը 2001թ. նույն ժամանակաշրջանի համեմատ կազմել է 100.6%):

#### Արտադրված ՀՆԱ-ն ըստ տնտեսության հիմնական բազային ճյուղերի

(%-ով)

	Աճի տեմպը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ հունվար-ապրիլ		ՀՆԱ-ի կառուցվածքն ընդամենի նկատմամբ հունվար-ապրիլ	
	2001	2002	2001	2002
	<b>ՀՆԱ, հիմնական գներով</b>	<b>106.9</b>	<b>108.1</b>	<b>85.5</b>
<i>այդ թվում՝</i>				
արդյունաբերություն	107.8	112.1	31.1	31.9
գյուղատնտեսություն	101.9	101.5	11.5	10.3
շինարարություն	106.1	115.9	5.1	5.7
տրանսպորտ և կապ	108.5	105.4	7.4	7.2
առևտուր և հանրային սնունդ	114.1	109.1	13.2	13.2
Զուտ (հանած սուբսիդիաները) հարկերը ապրանքների և ներմուծման վրա	119.3	116.7	14.5	15.4
<b>ՀՆԱ, շուկայական գներով</b>	<b>108.5</b>	<b>109.3</b>	<b>100</b>	<b>100</b>

#### Արտադրված ՀՆԱ-ի կառուցվածքը

(%-ով ընդամենի նկատմամբ)

	2001թ. հունվար-ապրիլ	2002թ. հունվար-ապրիլ
<b>ՀՆԱ (ընթացիկ գներով)</b>	<b>100</b>	<b>100</b>
<i>այդ թվում՝</i>		
ապրանքներ	47.7	48.0
ծառայություններ	37.8	36.6
զուտ (հանած սուբսիդիաները) հարկերը ապրանքների և ներմուծման վրա	14.5	15.4